ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմիի 1

№ 2082-Ա « 10 » հունիսի 2024թ.

ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարան հասցեագրված քաղաքացի Մինաս Սարգսյանի 2024 թվականի մայիսի 2-ի թիվ Դ-56961-24 դիմումի հիման վրա, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթներին համապատասխան՝ իրականացվում է վարչարարություն:

Երևանի քաղաքապետի 2024 թվականի հունիսի 3-ի N 2007-Ա որոշմամբ՝ Մինաս Սարգսյանի 2024 թվականի մայիսի 2-ի թիվ Դ-56961-24 դիմումի հիման վրա իրականացվող վարչարարության ժամկետը երկարաձգվել է մինչև 2024 թվականի հունիսի 10-ը:

Իրականացվող վարչարարության շրջանակներում 2024 թվականի մայիսի 2-ի թիվ Դ-56961-24 դիմումով ներկայացված պահանջի քննարկման շրջանակներում «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի կողմից տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ 2024 ապրիլի 8-ին Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի պողոտայի թիվ 45ա հասցեում ուժեղ քամու հետևանքով կենսունակության ավարտին մոտ գտնվող հացենու կենսունակ ճյուղը կոտրվել և ընկել է Մինաս Սարգսյանին պատկանող «Աուդի Ա6» մակնիշի 36MT998 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա:

Իրականացվող վարչարարության շրջանակներում ներկայացված՝ վնասի փոխհատուցման պահանջի քննության համար էական նշանակություն ունի 2024 թվականի ապրիլի 8-ին Երևան քաղաքի տարածքում արձանագրված քամու արագության վերաբերյալ տեղեկատվության ստացումը, որի նպատակով, փոխօգնության կարգով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի 2024 թվականի հունիսի 3-ի թիվ 17/93493-24 գրությամբ հարցում է ուղղվել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել, եթե փոխօգնության կարգով միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերով նախատեսված դեպքերում վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օր ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ փոխօգնության կարգով հայցված տեղեկատվությունը դեռևս չի ստացվել և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

ՈՐՈՇԵՑԻ

1.Մինաս Սարգսյանի 2024 թվականի մայիսի 2-ի թիվ Դ-56961-24 դիմումի հիման վրա իրականացվող վարչարարության ժամկետը երկարաձգել մինչև 2024 թվականի հունիսի 30-ը:

2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ